

գինւոյ մասին կը խօսին, որովհետեւ աւելի վտանգաւորն ու զգուշալին այս նիւթն էր, եւ ոչ եթէ միս չէին ուտեր կամ արգելուած էր, զոր գիտենք թէ կ'ուտէին: Անոր համար Զաքարէ իշխանը, նուազ խոհական քան յիշեալ Հարք, չափազանցօրէն պահանջեց «կրօնաւորաց միս ոչ ուտել» բնաւ, բայց ոչ ինչ շահեցաւ (Կիր. 83. Վրդ. 138):

9. — Խտրութիւն ի սեղանի: — Ուշագրաւ է Շնորհալուոյն մէկ պատուէրը, որ վանականաց շատերու ծուլութիւնը բժշկելու համար՝ կ'ուզէ որ կերակրոց բաշխումն «ըստ չափոյ աշխատութեանն» կատարուի՝ աւելի կամ նուազ դրուելով անոնց առջեւ (Ընդհ. 25-6): Եթէ այս տարբերութիւնը — համարելով որ գործադրուած է — կրնար խթանել ծոյլերը, բայց դիւրին է գուշակել՝ որ սեղանի վըրայ տեղի տուած է նաեւ աշարձակութեանց, նախանձու եւ անշուշտ աղմկի եւս վանականաց մէջ: Վերջապէս ոչ յաջող հրաման մ'իմաստուն հայրապետին կողմանէ: Մինչդեռ շատ գեղեցիկ է իւր ըրած միւս յանձնարարութիւնը՝ թէ ձերունիներն ու տկարներ, որոնք իրենց կեանքը մաշած էին եկեղեցւոյ ծառայութեան մէջ, մենաստանին կարողութեան համեմատ խը-